



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱԾԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՌՐԴ Զ.Ի ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԹԱՂՈՒՄԸ

Մայիսյան օրերը սպի և տրտմության օրեր հանդիսացան Մայր Հայրենիքի և Սփյուռքի հավատացյալ հայ ժողովորդի համար Մայիսի 9-ին վախճանվեց ամենքից սիրված ու հարգված, հավետ անմոռանալի Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետ Գեորգ Զ.Ծ. Ս. էջմիածինը կրկնակի ովհատատեղի էր դարձել սպի այդ օրերին: Գալիս էր հայ ժողովուրդը՝ համբուրելու իր սիրելի Հոր ու Հովվապետի Ս. Աջը և հրաժեշտ տալու իր պաշտելի Հայրապետին: Ովհատավորներից շատերը, որոնք եկել էին հեռավոր վայրերից, դիշերում էին վանքի բակում, զգովիվելու համար թաղմանական սրտառուչ և հոգեպար արարողություններից:


Մայիսի 25-ի է, երեկոյան ժամերգության պահին, Վեհի աճյունը, մեծ հանդիսաւթյամբ և եկեղեցական թափորով, իշխցում է Մայր Տաճար: Բակում, Ս. էջմիածնում, ալեկոծվում է խաղաղ՝ ժողովրդական սպակիր բազմությունը:

Երեկո է: Վերջալուկսի մարող լուսերը բոսորով են ներկալ Տաճարի խաշերն ու գմբեթները: Մայր մտնող արեգակի վերջին ճառագայթները թեկբեկվում, անհանում են երեկոյան կապույտ շամանդաղի մեջ, երերուն ստվերները երկարում են, դողում անհաստատ, ինչպես մահամերձի վերջին, մարող ճիգերը: Զանգակատան զանգերը հառաջանքով են լցնում այդ նոսրացած օդը, և թրթուն հնչումները հուզվում են մարող վերջալուսի վերջին շողերի հետ:

Վեհարանում կատարվում է Հոգեհանգիստ: Ապա հանգուցյալ Հայրապետի դագաղը համբընթաց դուրս է բերվում Վեհարանից: Առջևից շորս սարկավագներ տանում են սև թաղշապատ, արծաթյա գեղեցիկ խաշերով ու զարդերով՝ ընդելուզված դագաղի վահարիչը, Գետո գալիս են խաչվառակիրը, կերոնակիրները, դպիրները, սարկավագնիրը, քահանաները, վարդապետները, բոլորն էլ պարտ ու պատշաճ զգեստավորված: Ամբողջ շքով զգեստավորված եպիսկոպոսները, հանգուցյալ Հայրապետի կաղնյա դագաղը բարձրացրած, դուրս են բերում Վեհարանից: Բոլոր եպիսկոպոսները հանգուցյալ վեհափառի ձեռնատուններ են: Առջևից երկու բուրգառակիրներ խնկարկում են: Հանգուցյալ Հայրապետն իր հայրապետական զգեստավորման մեջ է: Կաթողիկոսական թանկարժեք խուրը գլխին, Հայրապետական խաչն ու դավագանը կողքերին, ձեռքերը խաշված, կարծես խաղաղ նիրճում է Նա դագաղի մեջ, շրջապատված իր մեծ ու փոքր հոգեկոր զավակներով: Հանդիսավոր հուշարկավորման երթը դանդաղեցնում է իր ընթացքը և կանգ առնում Վեհարանի գարբասի առաջ: Կարդացվում են մարգարեական և ավետարանական ընթերցվածները համապատասխան քարոզներով և աղոթքներով: Աղոթող և պատուակուում դողդոջուն շեշտով է. «Ընկա՛լ, մարդասէ՛ր Տէր, աղաշեմք զբեզ, զիմնդրուածն մեր, և դասաւրեա՛ գնողի հանգուցելոյս Տ. Տ. Գէորգայ Զ.Ի Կաթողիկոսի և Մայրապոյն Պատրիարքի Ամե-

նայն Հայոց ի Քեզ ճշմարիտ հաւատով ընդ ամենայն սովորս Քո...»: Նույն շքով և հանդիսությամբ առաջ է տարվում Վեհափառի դադաղը: Մինչև Մայր Տաճարի դռները այն ցածը է դրվում շորս անգամ և կատարվում է համապատասխան կարգը, ամեն անգամ տարբեր մարդարեությունների, գրքերի ու

բակում, գալթում, ամենուրեք մարդկային ծով է: Անսահման վիշտը անդիմադրելի ուժով քաշել բերել է բոլորին Ս. էջմիածին՝ հուղարկավոր լինելու մեծանուն և հայրենասեր Հայրապետի դադաղին: Անցնում է Հանգուցյալի դադաղը իննի, աղօթքի և երգի միջով, ու գլուխները խոնարհվում են վշտով



ՎԵՀԱՓԱՌԸ ԴԱԿԱՂԻ ՄԵԶ

ավետարանների ընթերցանությամբ և թաղման մելամաղձիկ, տիգուր շարականների երգեցողությամբ: Բարձրացող կնդրկի մշուշի միջից լսվում են արտթքի մրմուշները. «Եւ եթէ մարդկօքն ինչ յանցեալ իցէ սորա, բանիւ կամ գործով կամ մտածութեամբ, Դու, որպէս քարերար և մարդաբեր և տղորմած Աստուած, թողութիւն շնորհեա՞ տիմա...»:

Վեհարանից Մայր Տաճար երկու քայլի ճանապարհ է...: Բայց ի՞նչպիսի ծով բաղմություն է հավաքվել այնտեղ: Մեծ ճիգով է պահպանվում մարդկային հոսանքը, որպեսզի այն չփակի հուղարկավորման ճանապարհը: Ճաղերի, ցանկապատերի վրա,

ու հարգանքով հանուրց հավատացյալ հայության Հոր և Հովագավետի դադաղի առաջ:

Հուղարկավորման սփավոր թափորը մոտենում է Մայր Տաճարի ալվադ դռանը: «Բացէք ինձ զդումն ողորմութիւն» սաղմոսից հետո, «Ձողորմութիւն» Քո զդումն բաց մեզ շարականի մեղմանուշ հնչումների տակ բացվում են Տաճարի մայր դռները և երանաշնորհ Հանգուցյալի դադաղը դրվում է դաստիմ, Ս. Էջման սիհանի հանդիման, ու շղարշով ծածկված շահի տակ: Դադաղի շորս դին, շորս մարդաշափ կերպներ, և ժապավեններով երիվլած, առկայժում են թախծալի լույսով: Ամբողջ հոգմոր դասր շրջապատում

Է Հանգուցյալի դագաղը: Կատարվում է համապատասխան կարգը: Ավագագույն եպիսկոպոսը կարգում է սուրբ ավետարանը: Տաճարում մնանելային քար լուսվիյուն է տիրում և այդ սարսապետեցիկ լուսվյան մեջ լսվում նն Հիսուսի՝ Իր սիրատուն աշակերտներին ուղղած վերջին սրտառուչ ու տխուր հրաժեշտի խոսքերը. «Փոքր մի ևս, և ո՞չ տեսանէք զիս. և ապա սակափի մի, և տեսանիցէք զիս. և զի ես երթամ առ Հայր...»:

Սուրբ ավետարանի ճշմարիտ խոսքերը վշտի այդ պահին անդիմադրելիորեն թափանցում են սրտերը...: Մահվան մեծ իրա-

Քրիստոնյայի համար՝ մահով ակզբանավոր վում է կյանքի մի նոր սկիզբ: Ու մտածում ես — մեր սիրելի Հայրապետը ոո՛չ է մհուալ, այլ՝ ննջէ»:

Կյանքի և մահվան մասին այսպիսի սրբազն մտածողությունների մեջ վերջանում է սուրբ արարողությունը և քուրքը մոտենում մն, համբուրում Հանգուցյալի կրծքին զրած սրբություններն ու Ս. Աջը, մինչ շորս քահանաներ, լու կանգնած, սաղմոս են քաղում: Եվ ապա մինչև գիշերվա ուշ պահը անդադրում հոսում է ժողովրդական հոսանքը զետի Մայր Տաճար՝ վերջին անգամ տեսնելու



ՎԵՀԱՓԱՌԻ ԳԱԳԱՂԸ ՎԵՀԱՐԱՆԻՑ ՏԱՐՎՈՒՄ Է ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

կանությունը իր խորհրդի մեջ է առնում բուրփին... Մի պահ լսում ես մահվան հաղթության ձայնը... Բայց այդ մի բոսկ է տևում. «Մա՛ս, ո՞ւ է քո հաղթությունը...»: Ավետարանի չքնաղ էջերից հնչում է հարության դվարթ օրհներգը. «Թաջաշերեցարո՛ւք, զի ես յաղթեցի աշխարհի...»: Արդարեւ, բոլոր դադաղների առաջ, բոլոր գերեզմանների եղրին, հնչում է Քրիստոսի անսուտ պատկանը հարության. «Մահուամբ զմա՞ն կոխեաց».

և վերջին հրաժեշտը տալու հանգուցյալ Հայրապետին: Ավելի քան հուզիչ է պահը գիշերվան այդ խաղաղ ժամին, երբ մարդիկ հարգանքով խոնարհվում են դագաղի վրա և արցունքոտ աշքերով խաշակնքում են երեսները և հեռանում:

Երկու օր անընդհատ, գիշեր ու ցերեկ, գալիս են մարդիկ Ս. Էջմիածնից, մայրաքաղաքից, գավառներից, մոտիկ և հեռավոր վայրերից վշտահար դեմքերով, իրենց վեր-

չին հարգանքն ու պատիվը մատուցելու մեծ Հայրենասերին ու ժողովրդանվեր Հայրապետին:

Ու հայ հավատացյալը, ծանր վշտի այդ դժվարին օրերին, սրտառուշ ու հանդիսավոր իր երդումն է տալիս Վեհափառի դագաղի առաջ — անշեղ պահել իր սրտում հավատի

վում է այն տիսուր զգացմունքը, թե արդարն ո՞չ ևս է Հայ Եկեղեցու իմաստուն Քահանայափետը, զրջահայաց Հովհապետը, ժողովրդանվեր Աղջապետը և հայրենասեր Հայրապետը: Նա իր ողջ գիտակցական կյանքը, առանց մնացորդի, նվիրաբերել է հայ ժողովրդին, Հայ Եկեղեցուն և Հայ Հայրենիքին:



ՎԵՀԱՓԱՌԻ ԴԱԳԱՆԸ ՄԱՅՐ ՏԱՑԱՐԻ ԱՌՋԵՎ

Հուրը, Հայրենիքի գաղափարը և Վեհափառի հիշատակը, ընթանալ հայրենասիրության ու Խկեղեցասիրության այն ճշմարիտ ուղիով, որով ընթացել էր մեծ Հայրապետն իր ողջ կյանքի ընթացքում:

Մայիսի 27-ն է, Տաճարում վերջացել է ժամերգությունը: Հնագարքան Տաճարի շրջակայքը լեցուն է բազմությամբ: Այսօր հայ ժողովուրդը խոր վշտով հողին կհանձնի Տ. Տ. Գևորգ Զ. մեծագործ Հայրապետի աճյունը:

Մայր Տաճարի ներսում ու շրջափակում հուղարկավորության և թաշման արարողություններին ներկա գտնվող տասնյակ հագարավոր մարդկանց դեմքերի վրա կարդաց-

երկինքն էլ տիսուր էր այսօր: Թխապատույն ամպեղը ծածկել էին նրա սովորաբար գեղակապույտ արեսությունը: Երեկ գիշեր նա հորդառատ արցոնք էր թափել երկոր վրա, բայց այժմ, երբ Ամենայն Հայոց Հայրապետի անշունչ մարմինը ամերձեցեալ էր ի դուռն գերեզմանի», նա կարծես զսպում է իր արտասուրը, որպեսզի Վեհի զենքի համերժություն ճամբորդող հոգու հանդեպ հայ ժողովրդի զգացած հարգանքի ու մեծարանքի արտահայտությունը լիներ անթերի:

Մայր Տաճարից ներս, իշման սուրբ սեղանի առաջ, սուրբի վարագույրներով շրջապատված Հայրապետական Աթոռի կողքին, բարձրադրդիր տեղավորված փառաշուրջ դագաղի, մեջ, համբենական քննով խաղաղործին նըն-

ջում է երշանկահիշատակ Վեհափառը։ Սև ժապավենով երիզված շահերից ու կանթեղներից հեղեղվում է բուլսը Նրա դալիքահար, բայց գծերի կենդանի արտահայտությունը պահած դեմքի վրա, մինչ չորս քահանա հայրեր շարունակում մն սաղմոս քաղել մնեանում Վախճանյալի հոգու հանգստյան համար։

Կենտրոնական դասում, դագաղի գլխավերմամ, հարգալիր կանգնել են Մինսկի և Բելուստափայի արքեպիսկոպոս Պիտերիմ սըրբազնը, Կուլքիշևի եպիսկոպոս Հերոնիմ սըրբազնը, Միխաիլ ավագ քահանան, Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոսի ներ-

կան ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ՝ Հրաչյա Գրիգորյանը, Անդրեյվկասի մուսուլմանների Շեյխ ուշ-հալամի և Երևանի մուսուլմանների ներկայացուցիչները, Ա. Խոսհակյանը, Մարտիրոս Տեր-Մտեփանյանը, պրոֆ. Պետրոսյանը, Գրագույն Հոգիվոր Խորհրդի անդամներ Ս. Կամսարականն ու Մ. Մինասյանը, գեպուտատ Պատրիկ Սելյանը, Լիքանանից եկած բանաստեղծ Վահե-Վահյանը, Սիմոն Միմոնյանը (Կիլիկիայի Կաթողիկոսության օրդան «Հասկ» ամսագրի խմբագիր), կաշվի ֆարբիկատոր Գևորգ Զաթալագյանն ու ինժեներ Պողոս



ՎԵՀԱՓԱՌԻ ԹԱՂՄԱՆ ՆԵՐԿԱ ԵՊՈՂ ԲԱԶԱՄՄԱՀԱՅԱՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

կայացուցիչ Դիմիտրի եպիսկոպոսը, Այեփսանդր ավագ քահանան և քարտուղար Գագաշիձեն։

Աջակողմյան դասում ակնածալիր տեղ են դրավել ՍՍՌ Միության Մինիստրների Սովետին կից Կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ՝ Պոլյանսկին, Հայկա-

Անթոյանը, Ֆրանսիայից եկած Հայտնի գրող Լևոն Մեսրոպը, Ռումինիայից եկած Վահան Դանիելյանն ու դոկտ. Գրիգոր Բամբուկչյանը և ուրիշներ։

Զախարիովյան դասը գրավել են արտասահմանի և Մալլ Երկրի Հայ եկեղեցականության ներկայացուցիչները՝ Հյուսիսային



ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ԿԱՏԱՐՈՒՄ է
ՎԵՀԱՓԱՌԻ ՕՇՈՒՄԸ

Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդական տեղապահ Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը և նույն թեմի նախկին առաջնորդ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը, Հայքավայրի Ամերիկայի հայոց Հայրապետական նվիրակ Սիրոն եպիսկոպոս Մանուկյանը, Ռումինահայ թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Պալճյանը, Կիլիկիո Կաթողիկո-

դապետներ, ավելի քան հիսուն քահանաներ և սարկավագներ: Միսակատարությունների կանոնավորությանը հսկում է Մայր Աթոռի միաբան գերազնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տ. Հովհաննիսյանը:

Առավոտյան ժամը 10.30-ին սկսվում է սուրբ պատարագը: Պատարագիչն է Մեծի Տաճա Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ



ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄՈՒՑԻՉՆԵՐԸ, ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆՆ
ԵՎ ՏԻԱՐ ՍՏԵՓԱՆ ԿԱՄՍԱՐԱԿՅԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԺԱՄԱՆԱԿ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

սության պատվիրակներ՝ Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը, Շավարշ վարդապետ Գույումճյանը և Շահն արեղա Աճեմյանը, Երուսաղեմի միաբաններից Հայրիկ վարդապետ Ասլանյանն ու Հայկաղին վարդապետ Արրահամյանը, Շիրակի առաջնորդ Սուրեն եպիսկոպոս Թորոսյանը, Աղրթեղանի հայոց առաջնորդ Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը, Հյուսիսային Կովկասի հայոց թեմի առաջնորդ Վարդան ծայրագույն վարդապետ Տեր-Սահակյանը, Գալֆայանի հայոց թեմի առաջնորդ Վարդան ծայրագույն վարդապետ Վաթյանը, ուրիշ վար-

ամենապատիվ Տ. Խաղ արքեպիսկոպոս Աշշապահյանը: Սուրբ պատարագին սպասարկում են Հայկաղուն և Գնել վարդապետները, Էջմիածնական Կոմիտաս արեղա Տեր-Ստեփանյանն ու Կոմիտաս քահանա Շիրինյանը: Սուրբ պատարագը երգում է 110 հոգուց բաղկացած երգախումբը՝ ղեկավարությամբ հայրենադարձ երաժշտադես Հրանտ Գեորգյանի:

Պատարագը շարունակվում է վերացնող ներդաշնակությամբ: Պահը խորհուրդ է համակ:



ՀՈԽԱՐԿԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ՏԱԶԱՐՈՒՄ

«Ողջոյն»ի ժամկին սկսվում է Վեհափառի վերջին օժման կարդը: Գերաշնորհ Տ. Մամբրի արքեպիսկոպոս Գալֆայանը կարդում է «Տէր Աստուած Փրկիչ մեր» աղոթքը, ապա գերաշնորհ Տ. Սիոն Խափիսկոպոսը, սարկավագների, դպիրների և սուրբ պատարագին սպասարկողների ամբողջ խմբի ընկերակցությամբ, մեղղողի հնչյունների տակ, Տաճարի հյուսիսային կողմից բերուած է Սրբազնութեանի աղավնին և Ավագ սեղանի հարավային աստիճաններով վեր հանում: Վերջին օժման սրբազն պահն է: Երջանկահիշատակ Վեհափառ Հայրապետի վերջին օժումն է Վատարելու գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը: Սրբազնության մատնակցում են բոլոր եպիսկոպոսները, որոնք իրենց ուսմերին առած երանաշնորհ Հայրապետի դագաղը, սադմունելով, այն դում են Ավագ սեղանի բնմին: Մայր Տաճարի պատմական կամարների տակ հնչում է «Առաքելոյ աղամոյ» սբանչելի շարականը: Համել է վերջին օժման ամենան վիրապական բոպեն: Կատարվում է հանգուցյալ Հայրապետի վերջին օժման սուրբ արարողությունը և շարականի վսեմ հնչյունների տակ կաթիթումը են Սրբազնութեանի ուսկեցումն, լուսաձանանշ շիթերը: Ողջ Տաճարում լիլում է սրբազնի կերպերուն ձայնը՝ «Օրհնեսացի, օծոցի ձակատ հանգուցյալ Տ. Տ. Գէորգայ Սրբազնագոյն Կաթողիկոսի...»: Արցունքները խեղդում են նրան, ձայնը բեկվում է, բառերը կորչում են կրտկորդում և մի պահ վիթխարի կորստի վսկերում, մեծ Հայրապետից բաժանվելու անդարձանելի ողբերգությունը մի անգամ ևս ապրելով, խորհում է նա յուրովի: «Եվ իմշու ինձ վիճակվեց այս դառնությունը... օժելու...»:

Սուրբ սեղան բարձրացած եպիսկոպոսները, վարդապետներն ու սարկավագները վերցնում են հանգուցյալ Հայրապետի սերիդ դագաղը և պտտեցնում Ավագ սեղանի շուրջը: Խոր ու վեհիմաստ է այդ արարողությունը. այդ նշանակում է, որ Հանգուցյալը իր վերջին համբույրն է տալիս սուրբ սեղանին և նկեղեցու բոլոր սրբություններին: Հանգուցյալի անունից, այդ հանդիսավոր երթի ժամանակ, երգվում է նրա վերջին հրաժեշտի «Ողջոյն»ը:

«Ողջոյն քեզ, սուրբ եկեղեցի: Ողջոյն քեզ, սեղան սրբութեան: Ողջոյն ձեզ, դասք քահանայութեան: Ես ճանապարհորդեցի առ Արարիշն իմ»:

«Ե, ինչպիսի՝ սրտագրավ երգ է այդ, կյանքի ինչպիսի՝ նորդ, զգայուն ապրում ու գտացմունք են դրել մեր երանելի նախնիքը այդ խորիմաստ երգի բառերի ու եղանակի մեջ: Այդ երգը ցնցում է մարդկային ողջ էռթյումը, քարացած սիրտն անգամ փղձկում է ի լուր արդ հոգեզմայլ և իմաստալից շարականի:»

«Ողջոյն ձեզ, մանկումք եկեղեցւոյ: Ողջոյն ձեզ, հաւատացնեալ եղբարք իմ ի Քրիստոս: Ողջոյն ձեզ, համօրէն ժողովրականք: Ես ճանապարհորդեցի առ Քրիստոս յոյսն ամենեցնման:»

Հանգուցյալ Հավապետի վերջին քաժանման սրտառուշ պահն է այդ: Նա այլևս չի տեսնելու հարազատ, սիրելի դեմքեր, առարկաներ, որոնց հետ կապված է եղել նրա ամբողջ կյանքը, անգարող է այլևս նա սուրբ սեղան բարձրանալու և նրա վերջին խընդրանքն է ՊԱՂօթս արարէք վասն իմ, հարք իմ, եղբարք և որդիք...»:

Երեք անգամ սուրբ սեղանի շուրջը շրջան կատարելուց հետո, դագաղը դրվում է սեղանի առջևում, բոլորը մեկ առ մեկ երկյուղածությամբ մոտենում են և չոգում ու համգուրում Հանգուցյալի Աջը և ամենավերջին անգամ ստանում նրա համր ու անխոս, խորհրդավոր օրհնությունը:


Հանգուցյալ Հայրապետի ճակատն ու Աջը օծելուց հետո, սրբազն հայրը խոսում է հոգի ու բովանդակալից դամբանական: Այդ դամբանական չէ միայն, այլ մի տեսակ հանդիսավոր երդում, որ սրբազնի բերանով տալիս է ողջ հայ հոգեւորականությունը մեծանուն Հանգուցյալի դագաղի առջև՝ հավատարիմ լինելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, հայ ժողովրդին, մեր պահնձակի Հայրենիքին, մեր աղդային-եկեղեցական հոգևոր միհանականության, մեր ողջ պատմության, մեր նախնյաց նախանձախմբության, Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու աղքային ինքնուրության, ուղղափառության, գաղափարներ, որոնց համար մեծագործ Հայրապետը ապրեց ու գործեց:



Վեշպեսի Դադարը օծումուն շետք Դուրս է բերվում Մամ Տաշում

Սուրբ պատարագը շարունակվում է նույն հոգևոր վեհովթյամբ և ներդաշնակովթյամբ։ «Հայր մերքից առաջ, Մեծի Տաճան Կիլիկիո Աթոռի և հայ ժողովրդի անունից, հովանի դամբանական է խոսում նաև պատարագից ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոս Աջապահյանը։ Նա իր սրտառուց խոսքերի մեջ քերում է Կիլիկիո Աթոռի միաբանության և սիրոտքահայության վշտի ու հարգանքի խորին ու անկեղծ արտահայտությունը հանդու-

թըստում են օդում և տարածվում հեռանկարում։ Վերջի՞ն, վերջի՞ն անդամ Հանգուցյալը դուրս է զալիս իր հարազատ Մայր Եկեղեցու դռնից, վերջին ամենա բարովքոր, վերջին բաժանումը խանդակաթ մորից։ Հուշարկավորման թափորը կանգ է առնում զանգակատան առջևի կլոր հրապարակում։ Հանգուցյալի հրեսը դարձված է դեպի արևելք։ Այդ առաջին հանգիստն է։ Կարդացվում է սուրբ ավետարանը։ Ինչպիսի՝ բազմովթյուն է հավաքվել



ԳԵՂԱՓԱՌԻ ԴԱԳԱՂԸ ՊՏՏԵՑՎՈՒՄ Է ՄԱՅՐ ՏԱՅԱՐԻ ՇՈՒՐՅԸ

յալ Հայրապետ Գեորգ Զ.ի վախճանման առթիվ։ Համազգային սգի այս օրերին, որքա՞ն սրտապնդիչ ու գեղեցիկ են հնչում Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու միտրոֆյան և միամնության գաղափարները։

Սուրբ պատարագի ավարտման, Վեհափառի դադաղը Ավագ սեղանի քեմից քերվում է ատյան, ուր կատարվում է մեծահանդես հոգեհանգստյան կարգը։

Վեհափառի դադաղը նորից ուսերի վրա է։ Այսօր ժողովնեալ սրբոցն ի միասին շարականի հնչումների տակ այն դուրս է քերվում Տաճարի կենտրոնական մասով գեպի ալագ դրուր։ Զանգերի լալկան հնչումները թը-

դում։ Մարդկային գլուխների մի ամբողջ ծով է այդ, հազարավոր վշտալի, սգավոր դեմքեր, բազմաթիվ խորաթափանց հայացքներ իրենց վերջին հուզումնալից ամսաս բարովան են ուղղում իրենց Հորը, Հայրապետին ու Վեհապետին...։

Թափորը գանդաղորմն շարունակում է իր հանապարհը և կանգ առնում Տաճարի հյուսալին խորանի կողմում։ Առջևից տանում են շքեղ ու թարմ ծաղիկներով զարդարված պսակները, որոնք հեռավոր ու մոտիկ գաղութահայության և մայր ժողովրդի զանազան շրջաններից նվիրաբերված, սրտի անկեղծ ու հարազատ զեղումներ են։

Կատարվում է երկրորդ հանգիստը և թաղման սգո երթը շարումակում է իր ճամբան:

Ճաշի ժամն է: Արեգակը զենիթից այրում է անխնա: Թափորը կանգ է առնում Մայր Տաճարի արևելյան կողմում: Հանգուցյալի դեմքը դարձված է դեպի արևելք, դեպի աստվածային լույսը ու նա վերջին անգամն է հայոց այնքան պարզ ու կապուտակ, խաղաղ երկնքի տակ: Լոել են բոլոր ձայները, անդորրի մեջ, բուրվառի համաշափ շարժումների հետ, լսվում են սուրբ ավետարանի խոսքերը՝ օԱստուած չէ մեռելոց, այլ՝ կենդանեաց, զի ամենեքին նոմա վիճանիք:

Վողիողում հն քամուց, սաղարթախիտ ծառերը մեղմօրոր շշնջում են զեփյուից: Զովացող օդում լսվում են հոգեհանգստյան շարականի տիտուր, սրտաճմղիկ հնչյունները:

Հուղարկավորների ծովածալալ թափորը հետևում է Վեհի դագաղին, որ դեպի իր վերջին հանգստարանն է առաջնորդվում հոգեպարար աղոթքներով, զմայլելի մեղեղիներով, խնդրով ու կնդրկով օծում: Նա, որ իր կենդանության, որպես արթուր պահակ, տարիներով ման էր եկել հայ ժողովրդի հավերժության կոթողի՝ Մայր Տաճարի շուրջը, այժմ, դագաղի մեջ հանգչած, վերջին հրա-



ՎԵՀԱՓԱՌԻ ԴԱԳԱՂԸ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄՈՏ

Ին»: Ու հարության վսեմ գաղափարը, հոգու անմահության պայծառ հրացողքը կանգնուած է բորբոք առջև—Վեհափառը մի թե մեռած էր...»

Կատարվում է շորորորդ հանգիստը Տաճարի հարավային կողմում և սգո թափորը կամաց կամաց մոտենում է գերեզմանափոսին: Առջեկից տարվող խաչվառի սկ ժապավենները

ժեշտն էր տակս այս սրբազան վայրերին, մերթ կանգ առնելով չորս ծագերի վրա, մերթ շարժվելով դամրդաղ-դանդաղ, բայց յուրաքանչյուր քայլափոխի մի քիչ ավելի մոտենալով դամրարանին, ուր պիտի ամփոփվեր հուակ ուրեմն:

Եվ ահա Վեհի դամբարանը, Հայրենյաց պաշտպան ներսիս Աշտարակեցի և Հայոց

Հայրիկ Մկրտիչ Խրիմյան հայրենասեր կաթողիկոսաների շիրիմների առընթեր, որոնց կողքին բարձրադիր կանգնել է հայ ճարտարապետության հոյակապ մեկ հուշարձանը՝ մեծ զանգակառությունը:

«Մերձեցայ ես ի դուռ գերեզմանին, և ենա ինձ ժամանակ մտանել ի յարգանդ երկրի...»:

Զանցած մի փոքր, հանգուցյալ երանաշշնորհ Հայրապետի դադաղը դրված է գերեզմանի եղբին: Քահանաները ասում են, վանդակութիւնը: Սարկավագի քարտից և աղոթքներից հետո կարդացվում են ընթերցվածները առակաց գործից, մարդարեսություններից, առաքելոց թղթերից, սուրբ ավետարանից, ապա նորից աղոթք և այսպես շարունակի: Կուռ և ուշադիր լավում են աղոթքի խորերը. «Օրհնեա», Տէ՛ր, և պրնակութիւն սորա և զոսկերս...»: Մարդկային զանգվածները խոտացնում են իրենց շարքերը, շատերը ելել են բարձրությունների վրա՝ տեսնելու թաղման վերջին րոտմեները:

Թախուոտ դղոանցում են Մայր Տաճարի զանգակները: Սկսվում են հայ և օտար պատվիրակությունների հրաժեշտի խոսքերը: Խուսական Ուղղափառ Եկեղեցու անոտմից հանդես է գալիս Պիտուրիմ արքեպիսկոպոսը, Վրացական Եկեղեցու անոտմից՝ Դիմիտրի եպիսկոպոսը: Հյուսիսային Ամերիկայի հայոց թեմի անոտմից դամբանական ճառով հանդես է գալիս Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության անոտմից՝ Հայկազոն վարդապետ Արքահամբանը, Հարավային Ամերիկայի հայոց թեմի անոտմից՝ Սիոն Եպիսկոպոս Մանովյանը, Ռումինահայ թեմից՝ Վաղեն եպիսկոպոս Պալճանը, Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռի անոտմից՝ Պատուի Հայոց Պատրիարքությանը, Թյուրքիո Հայոց Պատրիարքության անոտմից՝ Ս. Էջմիածնի միաբան Տ. Մահակ և պիտույքու Տեր-Հովհաննիսայնը:

Ապա արքեպիսկոպոսներից մեկը հողը վերցնելով ափի մեջ, խաչակնքում է ասելով. «Օրհնեա», Տէ՛ր, ողորմութեամբ քով զհողս ծառայիս Քո, և լիշնա՞ զսա, զի հող էր և անդէն ըստ հրամանի բում դարձաւ ի հող»:

Հողը խաչաձև նեստվում է գերինզմանի մհջ: Լուլթյան մեջ զալում են ասղմոսի հնչումները: Բոլորի հայացքները վերջին անգամ ուղղուած են երանաշնորհ: Գեորգ Զ.ի դեմքին: Մաշշամծ մագաղաթագույն դեմքը, փակված աչքերը երևում են մի վերջին պահ, ապա բոլորի աչքի առջև կափարիչը ծածկուած է ամեն ինչ... Դապաղը կամաց-կամաց իշնում է գրի մեջ...: Զանգերը թալյման մեղեղիներ են ներգում: Տիսուր դղոանջները հելքեկում են օդում...: Կակծալի հառաշանքներով լիցվում է մթնոլուրուրը: «Գնա՞ս բարով, Վեհափա՞ռ», — Ժողովրդի միջից լսվում է մի վերկերուն, լացակուած ձայն: «Բարի՛ ճանապարհ, մեր Հա՛յր, մեր հարազա՞ռ», — շշնջում են իսոնավ աչքերով միաբանները և արտասուրք, որպես միսիթարանք, հորդում է աշքերից:

Վերջին անգամ թաղման մասնակիցները պահում են Հայրապետի ու փիլտուր գեռ ծծածկված գերեզմանի վրա: Վեհորեն խոնարհվել են գերեզմանի վրա նաև հայրապետական դրոշներ՝ խաչն ու գավազանը: Պահը անմոռանալի է, անկրկնելի ու փեհի-մաստ....

Թարմ հողը, համրդնթաց, լցվում է գերեզմանի փոսի մեջ: Եպիսկոպոսը օրհնում և կնքում է դամբարանը. «Օրհնեացի և վնքեալ պահեսցի շիրիմ և ուկերք ծառայիս Աստուծոյ, նշանաւ սուրբ խաչիս և սուրբ աւետարանաւ, անուամբ Հօր և Որդու և Հոգուն Սրբոյ...»:

Դամբարանի հողակույտը զարդարվում է թարմ ծաղկեպսակներով, մինչ ողջ Արարատյան դաշտով մեկ հնչում է «Ի վերին երուսաղմայլ կրթը»:

Այդ օրվանից Ս. Էջմիածնի հողն իր ծլցում է պահուած ամենքից սիրված ու պաշտված անզուպական Հայրապետի, մեծանուն Կաթողիկոսի թանկագին աճյունները:

Այդ օրը հավատացյալ հայ ժողովսկողը աշխարհի բոլոր ծագերում դառնապես սպացիր մեծ ու անդարմանելի կորուստը:

Կանցնեն դարեր, բայց մեծ հայրենասեր Գեորգ Զ. Կաթողիկոսի անմահ հիշատակը միմնաւ սերումների սրտում:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Թաղումից հետո, պատմական Վեհարանի մեծ սրահում, Ս. էջմիածնի վշտակիր միաբանության և Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից, ի հիշատակ լուսահոգի Հայրապետի պատրաստված հոգեճաշի սեղանի շուրջ հավաքվում են արտասահմանից Խեկած հոգևորական և աշխարհական պատվիրակները՝ Մայր Երկրի եկեղեցականության ներկայացուցիչների և օտար հյուրերի հետ միասին։

Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող Տ. Վահան Արքեպիսկոպոս Կոստանդնուպոլիսի առաջարկով ներկաները մի բոպե հոտնկայս լուսություն են պահում ի հարգանս հոգելույս Հայրապետի։ Ապա սրբազնը հակիրճ ճառուվ նշում է, թե հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու համար շահեցուցիչ էր եղել կորուսոր երջանկահիշատակ Հայրապետի, որ ճարտար, իմաստուն և շրջահայաց նավապետ էր, բայց միսիթարական է գոնում այն, որ Նրա շնչովը դաստիարակված և հավատով զորացած տրիշ նավապետներ պիտի շարունակեն ղեկավարել Հայաստանյաց Եկեղեցին։ Վահան սրբազնը կոչ է անում սեղմելու շարքերը, լցնելու մեծագործ Հայրապետի մահվամբ գոյացած պարապը և ովստե-

լու նրա բարձր օրինակով շարունակելու Վեհափառի կիսատ թողած գործը։

Հաջորդաբար խոսք են առնում Մեծի Տաճն Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ Տ. Խաղ Արքեպիսկոպոս Աջապահյանը, վրաց Դիմիտրի եպիսկոպոսը, Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը, Դերենիկ և Սուլբեն եպիսկոպոսները, Շավարշ, Հայրիկ և Հայրազուն վարդապետները, Փայլակ սարկավագը, ոռւմինահայերի պատվիրակ դոկտ. Գրիգոր Բամբուկչյանը, Հոգևոր Ճեմարանի դասախոս Արթոն Հատիկյանը և բանաստեղծ Վահե-Վահյանը, ներքողեղով մեծ Հանգուցյալի անձի մեջ հայրենատեր, ժողովրդանվեր, մարդասեր, ուստանասեր, համաշխարհային խաղաղության անխոնչ պաշտպան և Հայաստանյաց Եկեղեցու ավանդությունների արթոն պահապան Հայրապետին։

Մեծի Տաճն Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ ամենապատիկ Տ. Խաղ Արքեպիսկոպոս Աջապահյանի «Պահպանիջառով փակվում է հոգեճաշը, որը առիթ էր առեղծել մի անգամ ևս նշիկու արտասահմանի և Մայր Երկրի հայ հոգևորականության անխստ հավատարմությունը՝ Մայր Աքիլու Ս. էջմիածնի հանդեպ և Հայ Եկեղեցու անփորտակելի միլովյունն ու միասնականությունը։

